# ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

*Մարիամ Մարգարյան՝, Հովսեփ Մովսեսյան՝՝*

Քաղաքական լեգիտիմության հիմնախնդրի ուսումնասիրումն արդիական է կերպափոխման գործընթացում գտնվող հասարակություններում, որոնք «առաջին սերնդի» ժողովրդավարների կատարած գծային ազատական բարեփոխումների արդյունքում հայտնվել են քաղաքական զարգացման ճգնաժամերի (բաշխման, մասնակցության, շարժունակության, նույնականացման, լեգիտիմության) մեջ: Ավելին, օգտվելով ժողովրդավարության որակի բնույթից՝ ժողովրդահաճ ուժերը, հեղափոխականացնելով ընտրազանգվածի քաղաքական ցածր գիտակցությունը, խաթարում են լեգիտիմությունը՝ ազգային անվտանգության ապահովման համար ստեղծելով ներքին և արտաքին համաչափ-անհամաչափ նոր սպառնալիքներ: Հետխորհրդային նորանկախ երկրներում տեղի ունեցած «գունավոր կամ պատրանքային» հեղափոխությունների քաղաքակրթական, ինստիտուցիոնալ, սոցիալ-հոգեբանական և աշխարհաքաղաքական հիմքերի տարամիտվածությունը վերանայեց «առաջին սերնդի» ժողովրդավարների իշխանության լեգիտիմացման գծայնության արդյունավետությունը: Ուսումնասիրվող թեմայի տիրույթներում ուշագրավ են նաև արաբական երկրների քաղաքական զարգացումները, որտեղ պատրանքային ժողովրդավարության դերակատարները ներծին ու արտածին նոր ազդակների օգնու-

՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

՝՝ ԵՊՀ քաղաքական գործընթացների և ինստիտուտների ամբիոնի հայցորդ:

թյամբ մերժեցին իշխանության ներկայացուցիչների լիազորությունների լեգիտիմությունը: Ժողովրդավարական լեգիտիմության նկատմամբ գիտական հետաքրքրությունը մեծացել է նաև գլոբալ կերպափոխումներով պայմանավորված, քանի որ «կենտրոն-ծայրամաս» շահերի ներդաշնակման համար անհրաժեշտ է կանխել մեգապոլիսներում գործառող տարաբնույթ մարգինալների թատերականացված քաղաքական գործունեությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է ուսումնասիրել *անցում-կերպափոխում-լեգիտիմություն-համախմբում-անվտանգություն* փոխհարաբերությունների բազմաչափության համադրականության հիմնախնդիրները՝ անցումից համախմբում հարացույցի ենթատեքստում բացահայտելով ազգային անվտանգության ապահովման և ժողովրդավարության որակի միջև եղած կապը: Ամբոխավարության, մարգինալության կանխման, ինչպես նաև ազգային անվտանգության նոր սպառնալիքների բացահայտման նկատառումներով ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության հաստատման հիմնախնդրի ուսումնասիրումն իրականացված է քաղաքական գիտության նոր գիտաճյուղի՝ համախմբագիտության (կոնսոլիդոլոգիայի) եզրույթների միջոցով:

Ժողովրդավարական լեգիտիմությունը, իշխանության դերակատարների փոխհարաբերությունների բնույթով պայմանավորված, *հասարակություն-պետություն-ազգ-անհատ* բազմավեկտոր երկխոսության համակարգ է: Որպես քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման արդյունք՝ այն համալիր ամբողջություն է, որին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգերի բնականոն արդիականացում,
- երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և տեղեկատվահաղորդակցական համակարգերի համամասնական զարգացում,

- «կենտրոն-ծայրամաս» տիրույթներում իշխանության հարաբերությունների լեգիտիմ և լեգալ երկխոսության ծավալում,
- երկրի տարածքում վարչակարգի կողմից ընդունված օրենքների և կառավարության որոշումների կատարում՝ «լավ կառավարման» սկզբունքների հիման վրա,
- պետական քաղաքականության մեջ կառավարման ուժային և համագործակցային մեթոդների դերի հավասարակշռում՝ պետականաշինության մշակույթի զագացում,
- ճանաչում միջազգային ասպարեզում՝ մասնակցություն ռազմավարական/խաղաղասիրական անվտանգության կերտման գործընթացին:

Ակնհայտ է, որ ժողովրդավարական լեգիտիմությունը քաղաքական զարգացան այնպիսի աստիճան է, որի շրջանակներում իշխանության դերակատարները համախմբման նպատակով կարողանում են հաղթահարել ինչպես անցման, այնպես էլ գլոբալ քաղաքատնտեսական գործընթացների ժամանակ առաջացած ճգնաժամերը և պարբերաբար մակածվող անորոշությունները: Ժողովրդավարական անցման գործընթացում ծագած անորոշության մասին առաջին անգամ խոսել են XX դարի 50-60-ական թվականներից Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների փորձը հանրագումարած քաղաքագետներ Գ.Օ'Դոնելը և Պ.Շմիթերը. «անցումը տեղի է ունենում որոշակի մենիշխանական վարչակարգից դեպի անորոշ «ինչ-որ բանի»: Այս «ինչ-որ բանը» կարող է կապված լինել ինչպես ժողովրդավարական լեգիտիմության հաստատման, այնպես էլ նոր և, հնարավոր է, առավել կոշտ ավտորիտար կառավարման ձևի վերականգնման հետ» [1, p. 3]: Վերոնշյալ հեղինակներն անցումից համախմբում տիրույթներում մշակել են անորոշությունից դուրս գալու չորս հնարավոր սցենարներ.

1. Դերակատարներից որևէ մեկը, եթե չունի հստակ հակակշիռ, ապա ուժային ռազմավարությունն առաջացնում է *«բոլորի պատերազմը բոլորի դեմ»,* իսկ զանգվածների ներգրավվածության դեպքում՝ նաև քաղաքացիական պատերազմ: Տվյալ սցենարի դեպքում հնարավոր չէ անորոշությունից լեգիտիմ դուրս գալ. այն միայն խորացնում է քաղաքական զարգացման ճգնաժամերի շարունակականությունը:
2. Դերակատարներից մեկը դառնում է իրադրության լիիրավ տերը՝ *«հաղթողը ստանում է ամեն ինչ»* սկզբունքով: Այս դեպքում ժողովրդավարական լեգիտիմության ձևավորումը պայմանավորված է հաղթողների իրականացրած իշխանության մշակույթով:
3. Դերակատարներից մեկի գերակայության դեպքում անորոշությունից ելքը կարող է դառնալ քաղաքական գործընթացի մասնակիցների իշխանության լեգիտիմության լեգալ կամ ոչ լեգալ համաձայնությունը համընդհանուր նորմերի ընդունման վերաբերյալ:
4. Դերակատարների ուժի և ուժային բախման ժամանակ պարտություն կրելու անորոշ հարաբերակցության դեպքում նրանք կարող են, որպես պայքարի միջոց, օգտագործել իրավական ինստիտուտները՝ դրանով իսկ «բոլորի պատերազմը բոլորի դեմ» սկզբունքը փոխարինելով *«կանոններով պատերազմ»* սկզբունքի:

Հասկանալի է, որ առաջարկված սցենարներն իդեալական տիպային են. քաղաքական իրականությունում ավելի շուտ անհրաժեշտ է խոսել սցենարների համակցումների մասին: Օրինակ, ՀՀ-ում ՀՀ նախագահական ընտրություններին հաջորդած 1996թ. սեպտեմբերյան դեպքերից հետո անորոշությունից ելքը ներառում էր «հաղթողը ստանում է ամեն ինչ» սցենարը: Փաստորեն, ՀՀ քաղաքական գործ-

ընթացների առանձին ժամանակահատվածներն այս սցենարների օգնությամբ դիտարկելով՝ կարելի է վերակազմավորել սցենարներից յուրաքանչյուրի տրամաբանությունը և ի հայտ բերել անցումային վարչակարգերին բնորոշ լեգիտիմության առանձնահատկությունները: Ելակետային այս մոտեցման համատեքստում անցման ժամանակ, ճիշտ է, ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունն ունի որոշակի նորմավորված բնույթ, սակայն արդյունքներն ի սկզբանե անհայտ են: Բացի այդ, ավտորիտար ժողովրդավարական կառավարման ժամանակ ինստիտուտների գործունեությունը լեգալ է, սակայն քաղաքական գործընթացի արդյունքների լեգիտիմությունը կասկածանքի է ենթակա, եթե, իհարկե, կանխավ որոշված չէ [2, էջ 123]: Անցման անորոշության կանխման ռազմավարական պլանավորումը ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության հաստատման գործընթացի կարևոր բնութագիրն է, որը կերպափոխման բնույթի արդյունք է: Այս տեսանկյունից անցումից համախմբում գործընթացում ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության հաստատման առանձնահատկությունները վերլուծելու դեպքում ակնհայտորեն երևում է, որ ՀՀ-ում առկա անորոշությունների կանխման նկատառումներով անհրաժեշտ է քաղաքական և տնտեսական շուկայի արդիականացում: Նմանօրինակ տիրույթներում Ա.Պշևորսկին հատուկ ուշադրություն է դարձրել ոչ միայն քաղաքական վերնախավի, այլև հասարակության գիտակցության և քաղաքակրթվածության մակարդակի վրա [3, c. 11]: Նմանօրինակ մոտեցումն էլ պայմանավորում է ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության գործառման հետևյալ մակարդակները.

1. ազգային միասնականության և համապատասխան նույնականության ձեռքբերում,
2. տնտեսական զարգացման հարաբերական բարձր մակարդակի նվաճում,

3. նորմերի և արժեքների տարածում, որը ենթադրում է ժողովրդավարական սկզբունքների ճանաչում, քաղաքական ինստիտուտների հեղինակություն, միջանձնային վստահություն, քաղաքացիության զգացում և այլն,
4. բարեկեցության պետության և գործող իշխանական կառույցի գործունեության որակի աճի առկայություն:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության հաստատման գործընթացում գլխավորը մրցակցող ընտրանիների փոխհարաբերությունների, նրանց կողմից քաղաքական շուկայի կառավարման գործընթացում քաղաքական կարգի և ինստիտուտների գործունեության որակի գիտակցական բարձրացումն է: Այս մոտեցմամբ պաշտպանում ենք այն դրույթը, որ քաղաքական դերակատարների որոշումները և լեգիտիմությունը պայմանավորում են «շարունակական բարեփոխումներ վերևից» գործողությունների բնույթը: Դերակատարներն իրենք են ընտրում իրենց ռազմավարությունն ու մարտավարությունը՝ դրանով իսկ պայմանավորելով ստեղծվող ընթացակարգերի և ինստիտուտների յուրահատկությունները: Այլ խոսքով՝ ժողովրդավարական լեգիտիմությունը տեղի է ունենում ոչ այնքան հասարակական *tabula rasa*-ի պայմաններում, որի վրա կարելի է «գրել» ցանկացած քաղաքական ծրագիր. նրա վրա ազդում են ոչ միայն քաղաքական գործընթացները, այլև կառուցվածքային գործոնները՝ կապված առաջին հերթին մշակութային ավանդույթների և սոցիալ-տնտեսական բազմաշերտ ենթատեքստի հետ [4]: Իրականում ժողովրդավարական լեգիտիմացման հաստատումը կարելի է ձևավորել ասպարեզում առանց նրան աջակցող պայմանների հասունացման, սակայն կոնկրետ ժողովրդավարական անցումը և համախմբումը վերջին հաշվով կախված են նաև կառուցվածքային, այսինքն՝ ազգային և պետականաստեղծ,

սոցիալ-տնտեսական և մշակութաարժեքային գործոններից: ՀՀ ժողովրդավարացման գործընթացը հանրագումարելով՝ հաճախ առաջինի առնչությամբ քաղաքական ընտրանուն մեղադրում են «զարգացման կործանարար ուղի ընտրելու» մեջ: Սակայն հարկ է նշել, որ քաղաքական գործընթացների վեկտորային և ոչ վեկտորային մոդելների բարդ չափումների «հանդիպման» պատճառով ի սկզբանե օբյեկտիվորեն չի բացառվում անկանխատեսելին: Ուստի, հետխորհրդային նոր անկախացած երկրներից շատերում, «գունավոր/պատրանքային» հեղափոխություններով պայմանավորված, հիմք կա կասկածելու, որ ստեղծված ինստիտուտները բավարար չեն կազմավորելու արդյունավետ գործառող ժողովրդավարական քաղաքական լեգիտիմություն: Ակնհայտ է, որ «գունավոր/պատրանքային» հեղափոխությունները և աշխարհի տարբեր մասերում ահագնացող ահաբեկչությունը ստիպում են վերարժևորել վեկտորային զարգացման նպատակահարմարությունը. անհրաժեշտ է նոր ռազմավարությունների մշակման միջոցով կառուցվածքավորել և՛ գլոբալ, և՛ լոկալ քաղաքակրթությունների ապագան: Ռուս քաղաքագետ Ռ.Պ. Շպակովան «Լեգիտիմությունը և ժողովրդավարությունները (Վեբերի դասերը)» հոդվածում ընդգծում է «ի սկզբանե դեռ Վեբերի կողմից հիմնված» լեգիտիմության հասկացության մեջ «հեռավորությունը հասարակության և իշխանության միջև» և այդ հեռավորության հաղթահարումը տեսնում է ոչ թե իշխանության ակտիվ գործողությունների մեջ իր լեգիտիմության համար, այլ «այդ հեռավորության կրճատումը» կատարում է «ներքև»՝ «ժողովրդավարական հասարակության» ձեռքը փոխանցելով էլ ավելի մեծ թվով իշխանական լիազորություններ [5, cc. 169-174]: Այս համատեքստում ուշադրության են արժանի ՀՀ սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ 2003-2005թթ. ծավալված քննարկումները: Մինչդեռ ազատական-ժողովրդավարական արժեհամակարգի հիման վրա կատարվող Սահմանադրության փոփոխու-

թյան օգտին եզրահանգման գալն ու քաղաքական համապատասխան որոշման ընդունումն ինքնին պարտադրում է ՀՀ ավանդական և ազատական ընտրանուն նոր ռազմավարություն մշակել՝ հստակ արժևորելով ինչպես աստիճանակարգային, այնպես էլ ցանցային իրատես սցենարներով կատարված բարեփոխումների արդյունքները: Այս պատճառով էլ ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմությունը ենթադրում է քաղաքական համախմբման բազում սցենարներ, որոնցից մեկի ընտրությունն ընտրախավերից և հայ հասարակությունից պահանջում է անցյալից ժառանգած քաղաքական զարգացման միտումների իրատես վերլուծություն: Վերջիններիս օգնությամբ լեգիտիմացումը տեղի է ունենում իշխանական հարաբերությունների բոլոր մակարդակներում՝ ավանդականից հետարդիական, ներառելով ռացիոնալ և իռացիոնալ փոխհարաբերությունները: Այդ առումով խիստ արժեքավոր են Յ.Հաբերմասի մոտեցումները, մասնավորապես՝ *«ցանկացած իշխանության լեգիտիմացում ենթադրում է բանավեճի ծավալում»* սկզբունքը: «Լեգիտիմության ճգնաժամ (1973)» աշխատությունում Յ.Հաբերմասը հիմնավորեց այն մոտեցումը, որ ժամանակակից պետության սոցիալական բնույթի աճը հակասության մեջ է մտել կապիտալիստական արտադրության տրամաբանության հետ: Ուստի, արդի հասարակությունները, որպեսզի խուսափեն հեղափոխություններից, սոցիալական բունտերից քաղաքական ինստիտուտների գործառույթների հստակ իրականացման վրա հիմնված լեգալ կարգ են հաստատում՝ բանավեճի կամ բանակցությունների միջոցով: Յ.Հաբերմասի կարծիքով՝ նման կերպով հաղորդակցման մասնակիցներն իրենք իրենց հնարավորություն են տալիս իրացնել անձնական նպատակները՝ ըստ ընդհանուր նպատակների: Այսինքն՝ անհատական շահերն *անհասկանալի, անընդունելի և անհասանելի են, հետևաբար՝ լեգիտիմ չեն* առանց փոխըմբռնելի հաղորդակցման: Հետևաբար, անհրաժեշտ է հստակ տարբերություն դնել

*նպատակառացիոնալ և հաղորդակցառացիոնալ գործողությունների միջև* [6, p. 8-9]: Արդյունքում՝ *ինքնիշխանությունների բախումները* չեզոքացնելու նպատակով անվտանգության քաղաքականության մշակման և ապահովման նկատառումներով լեգիտիմացումն ապահովում է փոխլրացում (*complementarity*), որը հնարավորություն է տալիս աշխարհը տեսնել միասնության մեջ՝ ազնվորեն վերինտեգրվելով և ամբողջականացվելով մարդու և մշակույթի անվտանգ արարման միջազգային գործընթացին [7, p. 7-10]: Նմանօրինակ քաղաքականությունը հնարավորություն է տալիս փաստել, որ ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության հաստատման հիմնական առանձնահատկությունը *«բարեփոխումներ վերևից» կամ «հեղափոխություն վերևից»* սցենարի ակտիվ կիրառումն է, որը ենթադրում է քաղաքական զարգացման *կառուցվածքային* և *ընթացակարգային* գործոնների համադրում: Նմանօրինակ գործընթացների համակարգային վերլուծության նպատակով, սկսած 2000-ից, ամերիկացի տեխնոլոգներ Ջ.Մեհոնին և Ռ.Մնայդերն օգտագործեցին «պատճառականության ձագարի» (*funnel of causality*) մեթոդաբանությունը [8, pp. 447 -484]: Վերջինիս օգնությամբ ապացուցվեց, որ անցումագիտական գրականության մեջ ժողովրդավարական անցման և ժողովրդավարության ծննդի (լինի դա նրա «օրգանական աճը, ուժային ներդրումը ներսից» կամ նույնպիսի «փաթաթումը դրսից») լեգիտիմության նկատմամբ միարժեք մոտեցում գոյություն չունի: Կիրառելով ժողովրդավարական լեգիտիմության գործընթացում «պատճառականության ձագարի» ընդհանրական մոտեցումը՝ փաստենք, որ այն հետևողականորեն ապակենտրոնացնում է իշխանական հարաբերությունները մակրոմակարդակից դեպի միկրոմակարդակ: Այս մոդելին համապատասխան փոփոխականները, որոնք նպաստում են ժողովրդավարական լեգիտիմությանը (սկսած վարչակարգի նախնական ազատականացումից մինչև ժողովրդավարական ինստիտուտների և

ընթացակարգերի կայացումը), կարող են դիտարկվել մակրոմակարդակից միկրոմակարդակ: Ձագարի առանցքի յուրաքանչյուր հարթությունը ներկայացնում է ժամանակային տարբեր չափումների մեջ գտնվող այնպիսի գործընթացները, որոնք իրար զուգամիտող պատճառական շղթա կազմվելով շարժվում են ձագարի լայն մասից դեպի նեղ մասը:

Նմանօրինակ գործընթացների շարժիչ ուժը հարաբերական անկախության մեջ իր շահերը պաշտպանող ընտրողն է, որի վարքագծով է պայմանավորված քաղաքական լեգիտիմության ապահովումը: Նման պարագայում ամեն անգամ հնարավորություն է ստեղծվում խաղարկելով նվազեցնել այն հետևանքները, որոնք կարող են ազդեցություն թողնել ՀՀ քաղաքական գործընթացի հետագծի էության վրա: Արդյունքում ունենք *փոխլրացման էֆեկտ*, որի դեպքում ենթադրվում է, որ տեղի պետք է ունենա շահերի համադրում մեկ կետում, ընդ որում՝ համադրման գործընթացը սկսվում է մակրոմակարդակից և ավարտվում միկրոմակարդակում: Այս գործընթացը ենթադրում է նպատակամետ փոփոխականների յոթ մակարդակներ.

1. արտաքին միջազգային մակարդակ (միջազգային տնտեսական իրադրություն, քաղաքական-ռազմավարական պայմաններ և հարաբերություններ, միջպետական և միջազգային ոչ կառավարական փոխազդեցություններ, համաշխարհային «ժամանակի ոգի»՝ գլոբալ *Zeightgeist*),
2. պետական և ազգաստեղծ գործոններ (միասնական տարածք, միասնական պետություն, ազգային ինքնության զգացում և այլն),
3. սոցիալ-տնտեսական զարգացման և արդիականացման, հասարակության արդիականության ընդհանուր մակարդակ,
4. սոցիալ-դասային գործընթացներ և պայմաններ (սոցիալական աստիճանակարգման և զարգացման աստիճան, սոցիալական խմբերի և դասակարգերի փոխհարաբերություն),

5. սոցիալ-մշակութային և արժեքային գործոններ, հասարակությունում գերիշխող մշակութային-քաղաքական արժեքներ և կողմնորոշումներ,
6. քաղաքական (*per se*) գործոններ և գործընթացներ (կուսակցությունների, հասարակական-քաղաքական շարժումների և կազմակերպված խմբերի ու նոր քաղաքական ինստիտուտների փոխհարաբերություններ, քաղաքական ռազմավարության և մարտավարության ընտրություն),
7. անհատական, անձնական քաղաքական-հոգեբանական գործոններ (առանցքային քաղաքական դերակատարների կոնկրետ որոշումներ և գործողություններ):

Լեգիտիմացման գործընթացի նման բազմամակարդակ վերլուծությունն էլ հենց հնարավորություն է ստեղծում ապահովել այն հարցերի բացատրությունը, թե ինչպես և ինչու են տեղի ունենում (կամ տեղի չեն ունենում) նոր ժողովրդավարական ինստիտուտների լեգիտիմացում և ժողովրդավարության համախմբում: Նման մոտեցման օգնությամբ հնարավորություն ենք ստանում կանխատեսել ՀՀ ժողովրդավարացման կառուցվածքային և ընթացակարգային գործոնների ռազմավարությունը: Ուստի, պայմանավորված քաղաքական ուժերի ռազմավարության և մարտավարության փոխհարաբերություններով, մինչև անգամ առանցքային քաղաքական դերակատարների անհատական յուրահատկություններով՝ կարևորում ենք հայ իրականությունում սոցիալ-դասային պայմանների (ժողովրդավարացման սոցիալական բազա) և մշակութաարժեքային գործոնների, իսկ հետո արդեն ընթացակարգային միկրոմակարդակի համադրականությունը: Քննարկող մոդելի առանձնահատկությունն այն է, որ որոշում կայացնող դերակատարները (և՛ ընտրանին, և՛ ընդդիմությունը, և՛ ընտրազանգվածը) վերջին հաշվով ազդվում են «արտա-

քին» կառուցակարգերից: Այդ պատճառով «պատճառականության ձագարի» բոլոր մակարդակներում առկա գործոնների բավական հստակ և արդյունավետ փոխշաղկապվածությունը հիմք է հանդիսանում, որ շղթայական զարգացումներով պայմանավորված ամենավերին հարթության գործոնները ներթափանցվեն մինչև նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգից պահպանված սոցիալ-հոգեբանություն: Այս առումով ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության հաստատումը որոշակի զուգահեռներ ունի անցումային բոլոր այն երկրների հետ, որոնց քաղաքական համակարգերը *ձևավորվում, կայանում, կերպափոխվում և բնականոն արդիականացման են ձգտում* էթնիկական բախումների պարագայում: Ուստի, նպատակահարմար է կարևորել հետևյալ առանձնահատկությունները.

ա. Ս.Հանթինգտոնի «Քաղաքակրթությունների բախման» և Ֆ.Ֆուկույամայի «Պատմության վերջ»-ի ազատական հայեցակարգերի գծային զարգացման արդյունքում կենտրոն-ծայրամաս տիրույթներում առաջացած «մեծ խզումը» վկայում է, որ ազատական ժողովրդավարության իդեալը միանգամից չէր կարող հանգեցնել քաղաքական զարգացումների՝ Ֆ.Զաքարիայի «այլոց հզորությունը» հայեցակարգի շրջանակներում: Անկախացումից հետո ՀՀ գծային ազատականացման արդյունքում առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերը ձևավորեցին *«նոր կենտրոն»-«նոր ծայրամաս»* հակասություններ՝ հանգեցնելով *«մեծ խզումից» «ուժեղ պետության» միջոցով դուրս գալու անհրաժեշտության* [9]: Լինելով բարդ և բազմաշերտ քաղաքական հասկացություն՝ ժողովրդավարությունը ենթադրում է կառավարության ղեկին տիրանալու իրավունքի թափանցիկ քննարկում, որն էլ խթանում է ժողովրդավարական լեգիտիմության հաստատման գործընթացի մեկնարկն ու ուղղվածությունը: Սակայն ազատական ժողովրդավարությունը ՀՀ-ում «պատճառականության ձագարի» վերին հարթության (ինչպես նաև ներքին հարթության) վրա ներազդող միակ

ուժը չէր: Ժողովրդավարական անցումը ՀՀ-ում այլ հետագիծ կարող էր ունենալ, եթե տեղի չունենար 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո[1]: Այսինքն, եթե այն լիներ նորաստեղծ ՀՀ սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգևոր, մշակութային կյանքը համակարգող միակ գործոնը, որի տիրույթներում տեղի էին ունենում քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացները: Նման երկրներից են Մերձբալթյան հանրապետությունները, Լեհաստանը, Հունգարիան, Չեխիան, Գերմանիան, որոնց ժողովրդավարական լեգիտիմացումն այսօր տեղի է ունենում համախմբման տիրույթներում:

բ. Ժողովրդավարական անցման գործընթացը ՀՀ-ում գրեթե միաժամանակ ներառեց երկու՝ Ղարաբաղյան հիմնախնդիրն առանձին և Հայ դատին առնչվող խնդիրներն՝ առանձին գործոններ, որոնց իրականացման համար «առաջին սերնդի ժողովրդավարները» գծային զարգացման (միայն ազատականացում) արդյունքում շահարկեցին և մարգինալացրին հասարակության սպասելիքները: Սակայն նույնիսկ այս դեպքում միջազգային շրջակայքի հարթության վրա 90-ական թվականներից մինչև այսօր ՀՀ քաղաքական զարգացման գործընթացում Ղարաբաղյան և Հայ դատի հիմնախնդիրները շարունակում են գերակայել: Այս պարագայում օրինաչափ է այն հանգամանքը, որ «պատճառականության ձագարի» յուրաքանչյուր մակարդակում ՀՀ ժողովրդավարացման արդյունքները, կրելով վերը նշված երկու գործոնների ազդեցությունը, փաստորեն այսօր էլ գերակայում են, բայց արդեն իրենց բազմավեկտոր բնույթով ունեն *կոմպլեմենտարության և սիներգետիկության արժեքաբանություն:* Այս նկատառումներից ելնելով՝ ուշագրավ է այն հանգամանքը, որ ռազմավարական անվտանգության գլոբալ դերակատարները՝ ԱՄՆ-ԵՄ-ՌԴ, հետա-

[1] 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի վնասի գոտու մակերեսը կազմել է 10 000 կմ² տարածք, ուր ապրում էր 1 մլն բնակիչ, ուժեղ ավերման գոտին կազմել է 3000 կմ² տարածք, ավերված քաղաքների թիվը՝ 11, գյուղերինը՝ 58, տուժած քաղաքների թիվը՝ 21, գյուղերինը՝ 342, անօթևան մնացածների թիվը՝ 514000 մարդ, զոհերը՝ 25000, www.nssp-gov.am/spitak.htm, spitakseism.info:

մուտ որոշակի նպատակների, օգտվելով քաղաքական ընտրանու անվճռականությունից ու տրոհվածությունից, հաճախ ժողովրդավարացման գործընթացի գնահատման և դրա վերահսկման առումով կիրառում են երկակի ստանդարտներ (օր.՝ տարբեր չափորոշիչներով են իրականացվում միջէթնիկական բախումների գնահատումը և կարգավորումը): Այս առումով էական ազդեցություն ունեցավ ոչ միայն Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի և ԼՂՀ շարունակական շրջափակումը, այլև նրանց կողմից ՀՀ-ի դեմ ծավալված տեղեկատվական պատերազմը: Ուստի, ՀՀ ժողովրդավարական լեգիտիմության հաստատման գործընթացն առավել համակարգված դիտարկելու համար «պատճառականության ձագարի» օգնությամբ վերլուծել ենք նրա մակարդակներից յուրաքանչյուրը՝ ցանկանալով բացահայտել նրանց միջև առկա պատճառահետևանքային կապերը.

1. **Միջազգային գործոններ.** 1990թ. օգոստոսի 23-ին Անկախության հռչակագրի ընդունումից, 1992թ. ՄԱԿ-ին ՀՀ անդամագրվելուց հետո ՀՀ-ն հնարավորություն ստացավ ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու: Սակայն տարածաշրջանի գրեթե բոլոր երկրների միջև աշխարհաքաղաքական տարամիտող կողմնորոշումները հանգեցրել են նրան, որ գլոբալ քաղաքականության հիմնական դերակատարները, նրանցից յուրաքանչյուրին ընդգրկելով իրենց շահերի և անվտանգության համակարգի տիրույթ, կրկնակի լարվածություն էին ստեղծում տարածաշրջանում: Արդյունքում՝ տարածաշրջանի պետություններն իրենց անվտանգության քաղաքականությունը միմյանց հանդեպ կառուցում են առճակատման, այլ ոչ թե համագործակցային տրամաբանության վրա:
2. **Ազգ-պետություն կազմավորող գործոններ.** այս մակարդակում անհրաժեշտ է կարևորել ազատական-ժողովրդավարական արժեքների հիմքի վրա մշակված ՀՀ Սահմանադրության (1995)

ընդունումը և 2005թ. սահմանադրական փոփոխություններով պայմանավորված ժողովրդավարական ինստիտուտների արդիականացման գործընթացը: Ղարաբաղյան հարցի վերջնական չկարգավորվածությունը և պատերազմի վերսկսման սպառնալիքից դրդված հասարակությունը և հատկապես պետական իշխանության այն ինստիտուտները, որոնք իրականացնում են պաշտպանության և անվտանգության գործառույթները, մշտապես կիսառազմականացված վիճակում են: Այս պատճառով ազգի համախմբման և ազատության ընկալումներում հասարակությունում առկա են *ազատական-պահպանողական և ազգայնական-պահպանողական մոտեցումներ:* Ազատական արժեքների կենսագործման նպատակով ՀՀ քաղաքական ընտրանին նպատակամետ ինտեգրվում է գլոբալ քաղաքակրթության կառուցվածքում՝ գիտակցելով, որ ՀՀ մեկուսացումը և ժողովրդավարության ցածր որակը կարող են հանգեցնել արտաքին միջազգային միջավայրի հետ ՀՀ քաղաքական համակարգի բախմանը: *Ազգայնական-պահպանողականները* հակված են ազգային հիմնախնդիրների գծային լուծմանը՝ մեղադրելով բազմավեկտոր քաղաքականության կողմնակիցներին ազգային խնդիրները նորովի մեկնելու մեջ (նկատի ունենք ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի «ֆուտբոլային դիվանագիտության» քննադատությունը ՀՅԴ-ի կողմից):

3. **Սոցիալ-տնտեսական գործոններ.** այս մակարդակում տարածաշրջանում ստեղծված անհավասար մեկնարկային պայմանները շարունակում են խոչընդոտել ՀՀ առաջընթացին: Ղարաբաղյան հիմնախնդրի չկարգավորվածությունը միաժամանակ տնտեսական և քաղաքական բարձր ռիսկի գործոն է և՛ ԼՂՀ, և՛ ՀՀ անվտանգության համար: ՀՀ ժողովրդավարացման ողջ գործընթացում, երբ փլուզվեց ԽՍՀՄ ժողովրդատնտեսական համա-

լիրը, տեղի ունեցավ տնտեսության փոշիացում և կենսական պաշարների ջլատում: Արդյունքում՝ ՀՀ-ում դրսևորվեց քաղաքական զարգացման *բաշխման ճգնաժամը* ՝ հանգեցնելով սոցիալական բևեռացման:

4. **Սոցիալ-դասային գործոններ.** այս մակարդակում ՀՀ-ում առկա է խիստ տրոհված պատկեր, չնայած ըստ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը» [10, էջ 10-11]: ՀՀ-ում անցման ազատականացման փուլում առաջացած սոցիալական բևեռացումը միջին խավի գրեթե բացակայության պատճառով շարունակում է սպառնալիք մնալ: ՀՀ-ում ձևավորված սոցիալ-դասային տարամիտվածությունը հասարակության մեջ ի սկզբանե կենտրոնախույզ միտումներ է ձևավորել, որոնք էլ հանգեցրին հայ իրականության մեջ քաղաքական զարգացման *շարժունակության ճգնաժամին:* Այդ իմաստով ուշագրավ է այն հանգամանքը, որ անկախության առաջին ամիսներին կենտրոնախույզ միտումներն ապակառուցողականացրին Հայաստանի ներքին կյանքը (ՀԱԲ դեպքերը) [11, էջ 112]: Միաժամանակ, Հայաստանի սահմանների և Լեռնային Ղարաբաղի բնակչության ֆիզիկական անվտանգությունն ապահովելու նկատառումներով հասարակության մեջ կենտրոնամետ ուժերի միավորման արդյունքում ձևավորվեց «Երկրապահը»: Վերջինս կարողացավ կանխել կենտրոնախույզ խմբերի հզորացումը, և Ղարաբաղյան պատերազմում տարած հաղթանակի ոգու շնորհիվ օբյեկտիվորեն կանխվեցին սոցիալական բևեռվածությամբ պայմանավորված հակամարտությունները: Դրանով իսկ նա հնարավորություն ստացավ ոչ

միայն մերձենալ ազատականներին, այլև, ներառվելով նրա մեջ, միջանկյալ կարգավիճակ ստանձնեց ազատական- պահպանողականների և ազգայնական-պահպանողականների միջև:

5. **Սոցիալ-մշակութային և արժեքային գործոններ.** այս մակարդակում ազատականների և ազգայնականների փոխհարաբերությունների միջև եղած տարաձայնությունները նվազեցին, քանի որ արդեն իսկ ձեռք բերված «վաուչերային» սեփականությունը չկորցնելու նպատակով նրանք սկսեցին ծրագրված մանիպուլացնել և մարգինալացնել զանգվածներին: Սակայն քաղաքական զարգացման հետագա գործընթացը, հատկապես 1998թ. ՀՀ նախագահական ընտրություններից հետո նոր որակ հաղորդեցին ազատական-ժողովրդավարական արժեքներին: Գծային զարգացման արդյունքում առաջացած սոցիո- և էթնոմշակութային օտարվածության հաղթահարման նկատառումներով պայմանավորված՝ քաղաքական ուժերը սկսեցին կարևորել ազատական-պահպանողականությունը և ավտորիտար ժողովրդավարությունը:

6. **Քաղաքական գործոններ և գործընթացներ.** այս մակարդակում ՀՀ քաղաքական իրականության մեջ նկատվում է քաղաքական ուժերի կողմից «պատերազմ խաղի կանոններով» ռազմավարության որդեգրում: Այս ամենը հանգեցրեց նրան, որ մարգինալ վազքի մեջ գտնվող քաղաքական ուժերը, վարելով ապազաղափարականացված պայքար, փոխզիջումային ռազմավարություն են մշակել՝ «քաղաքականությունն իբրև սակարկություն» սցենարով, որի պարագայում յուրաքանչյուրը ստանում է այնքան, որքան կարող է վերցնել: Արդյունքում՝ զուտ անձնային կամ խմբային շահերի պաշտպանության նկատառումներով սակարկություն է տեղի ունենում, որը ենթադրում է «դրական գումարով խաղ» և այսպես շարունակ:

7. **Անհատական կամ անձնական սոցիալ-հոգեբանական գործոնների** մակարդակում մշակվել են փոխզիջումային կառուցակարգեր՝ պայմանավորված իրավիճակով: Պատճառը քաղաքական հարթությունում անհատի մարգինալությունն է, որը պատճառ է դարձել իրականությունից ֆիզիկական և հոգևոր օտարման՝ գերակա դարձնելով լեգիտիմության ճգնաժամի ցիկլայնությունը:

Ամփոփենք. ՀՀ-ում գծային ազատականացման փուլը հանգեցրել է քաղաքական զարգացման ճգնաժամերի, իսկ որպես միջէթնիկական հակամարտության գործընթացի դերակատար՝ այն շարունակում է ենթարկվել այդ թատերաբեմում գործող երկվեկտորային զարգացման «խաղի կանոններին»՝ միաժամանակ ներքաշվելով և՛ սոցիալ-տնտեսական, և՛ միջէթնիկական բախումների ոլորտ: Նշված գործոնները, ձևավորելով որոշակի վարքաբանական նմուշներ, դարձել են ռիսկային հասարակության, պետության, ազգի, անհատի կենսագոյության համար: Այստեղ մենք կարևորում ենք ժողովրդավարական անցման սուբյեկտիվ առանձնահատկությունները պայմանավորող ՀՀՇ-ական քաղաքական ընտրախավի լատենտ դերը: Ըստ էության, նրա կայացրած որոշումներից էր կախված ազատականացման գործընթացին զուգահեռ առաջացած քաղաքական զարգացման ճգնաժամերի կառավարումը: Մինչդեռ Հայաստանի համար, ըստ իրականացվող բարեփոխումների հետապնդած նպատակի, անցման երկու խոշոր փուլերը՝ *ազատականացում և ժողովրդավարացում, հիմնվեցին ոչ լեգիտիմ և ոչ լեգալ «ցեխավիկության», այլ ոչ թե «նոր սերնդի» ժողովրդավարության վրա:* ԽՍՀՄ-ում 1980-ականների կեսերից հետո՝ գորբաչովյան «պերեստրոյկայի» շրջանում *«ցեխավիկության» միջոցով* կատարվեցին քաղաքական վարչակարգի ազատականացմանն ուղղված առաջին բարեփոխումները՝ հանրաքվեի մասին ԽՍՀՄ օրենքի փոփոխությունը, ձեռնարկությունների անցումը տնտեսաշվարկի և ինքնաֆինանսավորման, գրաքննության թուլա-

ցումը, հրապարակայնությունը և այլն: Այս բարեփոխումները մի կողմից՝ ցանկանում էին բարձրացնել քաղաքական գործընթացներ հավաքագրված դերակատարների ինքնավարության մակարդակը, մյուս կողմից՝ քաղաքական ինստիտուտների ժողովրդավարական գործառույթը: Բարեփոխումներն էապես նպաստեցին կոոպերատիվ շարժման վերելքին, և տեղի ունեցավ կապիտալի որոշակի կենտրոնացում նոր ձևավորված «ցեխավիկ» դասի ձեռքում: Թեպետ այն իր շրջանակներով դեռևս կայուն չէր, սակայն համազգային շարժմանն աջակցելու առումով պակաս դերակատարում չունեցավ: Ճիշտ է, հետագայում այդ դասն արմատական փոփոխությունների ենթարկվեց, սակայն հենց նրա գոյության փաստը ոգևորված զանգվածների համար ազատ շուկայական տնտեսության գաղափարը գայթակղիչ էր դարձնում: Իսկ բուն ազատականացման փուլը, մեր կարծիքով, սկսվեց, երբ իշխանության եկավ ՀՀՇ-ն, և Հայաստանի Գերագույն խորհրդի 1990թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրով երկրում սկիզբ առան ժողովրդավարական բարենորոգումները: Կատարված արմատական բարեփոխումների տրամաբանությունը պայմանավորված էր *ազատականության* և *ժողովրդավարության* հայեցակարգերով: Եթե *ազատականության բաղադրիչը* կենսագործունեության բոլոր ոլորտներում որոշակի տիպի ինստիտուտների ձևավորման համար անհրաժեշտ պայմաններ ապահովեց, ապա *ժողովրդավարության բաղադրիչը* պետք է ապահովեր դրանց բնականոն գործառման և փոխազդեցության համար անհրաժեշտ արարողակարգերի, ընթացակարգերի մշակումն ու իրականացումը: Ըստ էության, առաջինն ապահովեց բարեփոխումների կառուցվածքային, իսկ երկրորդը՝ գործառնական ու փոխազդեցության ասպեկտները: Հենց այս նկատառումներով էլ ցանկացած ոլորտում երկուսը միասնաբար կազմում են բարեփոխումների ամփոփ տրամաբանություն, որտեղ նրանք պետք է հանդես գան միաժամանակ կամ լրացնեն միմյանց:

Ահա թե ինչու բարեփոխումների արդյունքները Ռ.Դալը գնահատում է երկու չափորոշիչով՝ *մասնակցություն* և *մրցակցություն* [12, c. 56-57]: Առաջինի համար որոշիչ է, թե ինչպիսի և ինչ քանակով դերակատարներ են մասնակցում գործընթացին (մասնակցության ազատության աստիճանը), իսկ երկրորդը, թե ինչպես, ինչ ազատությամբ են նրանք մասնակցում գործընթացին (մրցակցության ազատության աստիճանը): Հայաստանի վերաբերյալ կարելի է վկայակոչել իրականացվող բարեփոխումների արդյունքների գնահատականը «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք» փաստաթղթում Հայաստան 2012-2013թթ. Ազգային ինդիկատիվ ծրագիրը, որտեղ արձանագրվեց. «ժողովրդավարական կառույցների հզորացումը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգանքը ԵՄ-Հայաստան հարաբերությունների հիմնական ոլորտներն են... 2008թ. նախագահական ընտրություններին հաջորդած քաղաքական ճգնաժամն ընդգծում է ժողովրդավարացման գործընթացի ամրացման և Հայաստանի քաղաքական համակարգում ու կառավարման մեջ եվրոպական արժեքների որդեգրման անհրաժեշտությունը» [13, էջ 7]: Փաստ է, որ սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում թեպետ իրավական-նորմատիվ առումով ՀՀ-ում ապահովված է ազատականության միջավայրը, սակայն գերակա չէ ժողովրդավարության բաղադրիչը, այսինքն՝ ազատականության հայեցակարգով հիմնադրված ինստիտուտների, կառույցների գործառնությունն ու փոխազդեցությունը ժողովրդավարության սկզբունքների համաձայն: Մինչդեռ ինստիտուտների ժողովրդավարացումը կառավարող ընտրանուն հնարավորություն է տալիս *գիտագործնականորեն հիմնավորել քաղաքական և կառավարչական որոշումները*՝ պայմանավորված ինչպես գլոբալացման գործընթացների քաղաքատնտեսական փոփոխությունների ինտենսիվությամբ, այնպես էլ «լավ կառավարման» սկզբունքների ներդրմամբ: Այս սկզբունքների օգնությամբ ՀՀ-ում

պետական կառավարման արդյունավետության բարձրացման նկատառումներով կարևորում ենք քաղաքական ընտրանու կողմից *կառավարման ծրագրային, գիտական ապահովման և արդյունավետության գնահատման համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը:* Դրանց գոյությունը և բնականոն գործունեությունն անչափ կարևոր են ՀՀ ժողովրդավարական անցման պայմաններում ոչ միայն ժողովրդավարության բաղադրիչի, այլև համախմբվածության բարձրացման առումով: Այս ամենը, համախմբվածության առաջնային նախապայման հանդիսանալուց բացի, կհանգեցնի նաև կառավարման թափանցիկությանը և որոշումների նախապատրաստման գործընթացին փորձագետների մասնակցությանը՝ նպաստելով ժողովրդավարական լեգիտիմության հաստատմանը: Վերջինիս առկայությունն էլ հենց ենթադրում է ժողովրդավարության համախմբում, որի հիմքում ընկած են ընտրությունները: Վերջիններիս օգնությամբ, տարանջատելով ժողովրդավարական անցման ժամանակային տարբեր փուլերը, տարբերակվում են *հիմնադիր, հիասթափության և ռացիոնալ ընտրություններ:* Ասվածին համապատասխան՝ «անցում-համախմբում» տիրույթներում ՀՀ ժողովրդավարական լեգիտիմության հաստատումը կարելի է բաժանել *ոգևորության (1990-1996), հիասթափության (1996-1998), սպասումների (1998-2008), սթափության (2008 - մինչ օրս)* փուլերի: Բաժանումը կատարված է ըստ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» տրամաբանության, համաձայն որի՝ երբ գծային զարգացմանը զուգահեռ հասարակության ընդերքում ձևավորվում է *ազգային արժեքային համակարգի լեգիտիմ արդիականացման հանրային պահանջմունք, ապա տեղի է ունենում շրջադարձ* ՝ գերակա դերակատար ընտրանու փոխդասավորվածության մեջ տեղի է ունենում փոփոխություն. ***«զաղափարական միասնական»*** և *«տրոհված, բաժանված»* ընտրախավերին փոխարինում է «*փոխհամաձայնեցված միասնական ընտրանիների համագործակցությունը»* [14]:

Փաստորեն, անցումից համախմբում գործընթացում անորոշությունից դուրս գալու ելքի հնարավոր տարբեր սցենարների դեպքում պետական-քաղաքական իշխանության և բյուրոկրատական ապարատի համալրմանը ծառայող «կադրերի բանկը» տարբեր է: Քանի որ անցումը սկսվեց *«բոլորի պատերազմը բոլորի դեմ»* սցենարով, ուստի հաստատված քաոսի պայմաններում քաղաքական պաշտոնների բաշխման ու բյուրոկրատական ապարատի գործունեությունը ենթարկվում էր քաոսի «օրենքներին»՝ *«հաղթողը ստանում է ամեն ինչ»:* Վերջին սցենարը ՀՀ-ում գերակա է եղել երկու անգամ. նախ, երբ 1991-ից անմիջապես հետո իշխանության իրականացման պատասխանատվությունը ստանձնեց ՀՀՇ-ն, հետո՝ 2000-ի մայիսից հետո: Ակնհայտ է, որ ժողովրդավարական լեգիտիմության կայացման համար անհրաժեշտ է ստատուս-քվո պահպանող *«ընտրանիների համագործակցություն»:* Արդյունավետ ժողովրդավարական անցումից համախմբում օրինակները փաստում են, որ «ընտրանիների համագործակցություն» սցենարն անցման լավագույն մոդելն է: Հրաժարվելով «պատերազմ բոլորի դեմ» ռազմավարությունից՝ անցում է կատարվում «պատերազմ խաղի կանոններով» ռազմավարության: Այս սցենարի կայացման համար կոշտ ուժային ռազմավարությունը բացառված է, ավելին, ստեղծվում են այնպիսի կանոններ, որոնք բացառում են «հաղթողը ստանում է ամեն ինչ» սկզբունքը: Այսինքն՝ հնարավորություն է ստեղծվում մրցակցության, լեգիտիմ ընտրությունների միջոցով կառավարող ընտրանու ձևավորման համար: Մեր կարծիքով՝ ՀՀ-ում ժողովրդավարական անցման փուլերի այս սցենարները, այնուհանդերձ, ժողովրդավարական լեգիտիմություն չեն ապահովի, եթե համախմբման սկզբունքներով չզարգանան:

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ ՀՀ-ում ժողովրդավարական լեգիտիմության կայացման համար անհրաժեշտ է՝

- *վերահսկել* քաղաքական ընտրանու գործունեությունը՝ քաղաքացիական և քաղաքական հասարակության ինստիտուտների ներուժի փոխներդաշնակման միջոցով,
- *բարձրացնել* կառավարող ընտրանու պատասխանատվությունը՝ ժողովրդավարության որակի ապահովման և համախմբման նկատառումներով,
- *իրականացնել* քաղաքական և սոցիալական տարածության «կենտրոն»-«ծայրամաս» հարթությունների հավասարաչափ զարգացում՝ ունիվերալ և ազգային արժեշահային համակարգի բնականոն արդիականացման օգնությամբ: Դրանց գերակայությամբ է միայն հնարավոր լեգիտիմացնել նախ՝ անհատ-հասարակություն-պետություն-միջազգային շրջակայքը, ապա միջպետական և միջազգային հարաբերությունները՝ ապահովելով ազգային անվտանգություն,
- *կարևորել* «բարեփոխումներ վերևից» սցենարը, քանի որ ՀՀ ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացի արդի փուլում նպատակահարմար է կասեցնել զանգվածներին մարգինալացնող «բարեփոխումներ ներքևից» զարգացումները: Այս պարագայում նախ՝ կնվազի հասարակության հեղափոխականացվածությունը, ապա՝ լեգիտիմացման գործընթացը կիրականացվի կառավարող ընտրախավի օգնությամբ, ինչն էլ հնարավորություն կտա ժողովրդավարական համախմբում իրականացնել,
- *մշակել* համահայկական զարգացման և անվտանգության համակարգված ծրագիր՝ այդ աշխատանքի մեջ ընդգրկելով ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի մրցունակ ներուժ ունեցող մարդկային ռեսուրսները: Անհրաժեշտ է միջազգային շրջակայքի և ազգ-պետություն կազմավորող գործոնների հարթությունում Ղարաբաղյան հիմնախնդրի գիտավերլուծական համալիր ներկայացում՝ ազգերի ինքնորոշման գերակայության սկզբունքով: Այս

պարագայում հայ հասարակությունը ժողովրդավարական լեգիտիմության ընձեռած հնարավորությունները կօգտագործի ազգային ինքնության բնականոն արդիականացման համար՝ ընդարձակելով Հայկական աշխարհի գործունեության լեգիտիմացման գլոբալ տարածության բազմաչափությունը,

- *ապահովել* հանրային շահի գերակայության վրա հիմնված շարունակական ժողովրդավարական բարեփոխումներ՝ անվտանգության տարաբնույթ ինստիտուտների ռացիոնալ գործունեության և արդյունքի կառավարման երաշխիքների գործառնման միջոցով:

***Հունվար, 2013թ.***

## Աղբյուրներ և գրականություն


1. *O'Donnell G., Schmitter P.* and *Whiteheand L.* Transition from Authoritarian Rule. Tentative Conclusions about Uncertain Democracies. Baltimore and London, Johns Hopkins University Press, 1996.
2. *Մարգարյան Մ.,* Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Պետական ծառայություն», 2006:
3. *Пшеворский А.,* Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. Пер. с англ./ Под ред. проф. Бажанова В.А., М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2000.
4. *Fabienne Peter,* Democratic Legitimacy, Routledge, New York, 2011.
5. *Шпакова Р.П.,* Легитимность и демократия (Уроки Вебера), ПОЛИС, 1994, N2.
6. *Habermas Jurgen,* Legitimation Crisis, Great Britain 1973.
7. *Deissler Gebhard,* The intercultural complementarity and integration principle: New horizons of intercultural management, GRIN Verlag, 2012, http://books.google.am/books?id=KapVDbqt5EgC&dq=complementarity&hl=ru&source=gbs_navlinks_s, 24.09.2012.
8. *Larsen S.* (ed.) The Challenges of Theories of Democracy: Elaborations Over Trends in Transitology. Boulder, N. Y., 2000.

9. *Фукуяма Ф.,* Великий разрыв. Под ред. А.Александровой, М., АСТ, 2003; *Фукуяма Ф.,* Сильное государство: Управление и мировой порядок в XXI веке, М., АСТ, 2006.
10. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Եր., ՊՏ, 2006:
11. *Վասիլյան Ռ., Միքայելյան Ի.,* ՀԱԲ-ի ճակատագիրը…, Եր., Ա. հ. 2005:
12. *Даль Р.,* Демократия и ее критики, Пер. с англ. Под ред. М.В. Ильина. М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2003.
13. Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք, Հայաստան. Ազգային ինդիկատիվ ծրագիր 2011-2013, Եր., ԵՀԱՀԳՏ, 2010:
14. *Linz J. J., Stepan A.,* Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post communist Europe, Baltimore, 1994.

# ОСОБЕННОСТИ СТАНОВЛЕНИЯ ДЕМОКРАТИЧЕСКОЙ ЛЕГИТИМНОСТИ В РА

***Мариам Маргарян, Овсеп Мовсесян***

Резюме

В статье демократическая легитимность рассмотрена как система многовекторного диалога общество-государство-нация-личность. Будучи результатом преодоления кризисов политического развития, демократическая легитимность представляет собой комплексную целостность, для которой характерно применение принципов «хорошего управления». Очевидно, что цветные/иллюзорные революции и проявляющийся в разных частях света терроризм заставляют переоценить целесообразность векторного развития. Необходимо с помощью разработки новых стратегий структурировать как глобальное, так и локальное будущее цивилизаций.